

<<2018Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ>> ՄՐՑՈՒՑԹԻ 9-Ը ՇՐՋԱՆԻ ԵՐԸՈՐԴ
ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հարց 1.

- Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային ծախսը, որ որվա փոխարժեքով պետք է հաշվառվի:

ա. Բանկի կողմից գործարքի հաստատման օրվա.

բ. Բանկի կողմից գործարքի հաստատման օրվա.

գ. Բանկային գործարքը հաստատված փաստաթղթի օրվա փոխարժեքով.

դ. Սխալ են բոլոր պատասխանները:

Հարց 2.

- Շրջանառության հարկով աշխատող կազմակերպության դեպքում երրորդ երկրներից ներմուծված ապրանքների մասով, նշվածներից որոնք են շրջանառության հարկով նվազեցման ենթակա՝

ա. Ինվոյսային արժեք.

բ. մաքսային արժեք.

գ. բնապահպանական վճար.

դ. մաքսատուրք.

Հարց 3.

- Գործակալական ծառայությունների մատուցման դեպքում, որն է համարվում ծառայությունների մատուցման վայր.

ա. Պրինցիպալի գրանցման վայրը.

բ. Գործակալի գրանցման վայրը.

գ. Ծառայությունը փաստացի ստացողի գրանցման հասցեն.

դ. Բոլոր պատասխանները սխալ են:

Հարց 4.

- Անշարժ գույքի վարձակալության կանխավճարից կարող է արդյոք առաջանալ եկամտային հարկ:

ա. Այո.

բ. Ոչ:

Հարց 5.

- **Նշված ծախսումներից որը միանշանակորեն չի ներառվում պաշարների ինքնարժեքում.**
- ա. պատրաստի արտադրանքի՝ գնորդներին հասցնելու հետ կապված տեղափոխման ծախսումները.
- բ. պաշարների ներկրման հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման.
- գ. պաշարների վերամշակման ծախսումները .
- դ. փոխառության ծախսումները:

Հարց 6.

- **Հաշվապահական հաշվառման նահատումներում փոփոխությունների արդյունքը՝**
- ա. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում է միևնույն դասակարգմամբ, որը նախապես օգտագործվել էր գնահատման համար.
- բ. արտացոլվի որպես նախորդ տարիների չբաշխված շահույթի ճշգրտում.
- գ. արտացոլվի որպես նախորդ տարիների չբաշխված շահույթի ճշգրտում, եթե այն տեղի է ունեցել ավելի քան 3 տարի առաջ, իսկ հակառակ դեպքում ներկայացվի միևնույն դասակարգմամբ.
- դ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվի առանձին տողով:

Հարց 7.

- **Հիմնական միջոցների մաշվածության օգտակար ծառայությունը՝**
- ա. հետագայում չպետք է վերանայվի
- բ. պետք է վերանայվի միայն օրենքով նախատեսված նվազագույն ժամկետների փոփոխության դեպքում
- գ. պետք է պարբերաբար վերանայվի և փոփոխվի, եթե ընթացիկ գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից
- դ. պետք է պարբերաբար վերանայվի և փոփոխվի, եթե ընթացիկ գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից՝ այն պայմանով, որ վերանայման արդյունքում օգտակար ծառայությունը չպետք է ավելացվի:

Հարց 8.

- Արտացոլվում է խմելու ջրի մատակարարման ծառայությունների գծով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարը (վճարումը դեռևս չի ստացվել).

ա. Դեբետ 221

Կրեդիտ 524

բ. Դեբետ 611

Կրեդիտ 542

գ. Դեբետ 221

Կրեդիտ 542

Հարց 9.

- Դուրս գրված առևտրական դեբիտորական պարտքի մարում՝

ա. Դեբետ 252

Կրեդիտ 614

բ. Դեբետ 252

Կրեդիտ 631

գ. Դեբետ 252

Կրեդիտ 222

Հարց 10.

- Վաճառքի նպատակով կառուցվող ակտիվի արտադրության ժամանակ օգտագործված միջոցների գծով հաշվեգրված փոխառության ծախսումների կապիտալացումը.

ա. Դեբետ 811

Կրեդիտ 414.

բ. Դեբետ 414

Կրեդիտ 727.

գ. Դեբետ 727

Կրեդիտ 811:

<<2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ>> ՄՐՑՈՒՅԹԻ 9-ԲԴ ՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

<<X>> ՄՊԸ-ն հանդիսանում է կահույքի մանրամեծածախ վաճառքով զբաղվող կազմակերպություն, որը հիմնադրվել է 2014թ.-ին: Կազմակերպությունը հիմնադրման տարվանից աշխատել է շահույթով և շահաբաժինների բաշխում չի կատարվել:

Հաշվետու տարվա արդյունքներով կազմակերպության զուտ ակտիվների մեծությունը կազմել է 1600 հազ. դրամ:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 31.12.2017թ.-ի դրությամբ առկա են հետևյալ տվյալները՝

	Եկամուտներ	Գումար /հազ. դրամ/
1	Արտադրանքի իրացումից եկամուտ մեծածախ վաճառքից /առանց ԱԱՀ/	750 000
2	Արտադրանքի իրացումից եկամուտ մանրածախ վաճառք	620 000
3	ԱՄՆ-ում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից եկամուտ, որն ստացվել է ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձից	1200
4	Հիմնադրին տրամադրված փոխառությունից տոկոսային եկամուտ	10000
5	ՀՄ օտարումից եկամուտ /հոսքագիծ/	7800
6	Գույքի վարձակալությունից եկամուտ	520

	Ծախսեր	Գումար /հազ. դրամ/
1	Իրացված արտադրանքի ինքնարժեքը	1 580 000
2	Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով չհիմնավորված նյութական ծախսեր՝ ներառյալ դրանց գծով հաշվարկված եկամտային հարկի գումար	37 586
3	ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից ստացված փոխառության տոկոսային ծախս	6890
4	ՀՀ տարածքից դուրս կատարված կադրերի վերապատրաստման ծախսեր (15 աշխատողի համար)	86000
5	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	33000
6	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, որից- -հաշմանդամներին հաշվարկված աշխատավարձ -Ընկերության աշխատակիցների չօգտագործված արձակուրդի գծով ՖՀՄՄ-ներին համապատասխան ճանաչված պահուստ	72000 5200

Լրացուցիչ տվյալներ՝

- Կազմակերպությունն անհատույց ստացել է 5600 հազ. հոսքագիծ 20.03.2017թ.-ին:
- Հոսքագծի տեղակայման և գործարակման նպատակով համաձայն 01.04.2017թ.-ին ներկայացված հաշիվ-ապրանքագրի 02.04.2018թ.-ին Գերմանիայի ռեզիդենտ ընկերությանը վճարվել է 65 հազ. եվրո:

3. Հոսքագիծը կազմակերպության նախանշված նպատակով ենթակա էր գործարկման 01.04.2017թ.-ից:

Որոշել 2017թ.-ի հարկվող շահույթը և շահութահարկի գումարը:

Խնդրի պատասխան	
Եկամուտներ	Հազ.դրամ
1. Արտադրանքի իրացումից եկամուտ մեծածախ վաճառք, առանցԱԱՀ	750 000
2.Արտադրանքի իրացումից եկամուտ մանրածախ վաճառք	516 667
3.ԱՄՆ-ում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից եկամուտ, որը ստացվել է ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձից	1 200
4.Հիմնադրին տրամադրած փոխառությունից տոկոսային եկամուտ	10 000
5.ՀՄ օտարումից եկամուտ(հոսքագիծ)	7 800
6.Գույքի վարձակալությունից եկամուտ	520
7.Անհատույց ստացված ՀՄ	5 600
	1 291 787
Ընդամենը	
Նվազեցվող ծախսեր	Հազ.դրամ
1.Իրացված ապրանքների ինքնարժեքը	1 580 000
2.Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով չհիմնավորված նյութական ծախսեր՝ ներառյալ դրանց գծով հաշվարկված եկամտային հարկի գումարը	36 000
3.ՀՀ ռեզիդենտ կազմակերպություններից ստացված փոխառության գծով տոկոսային ծախս	3 200
4.ՀՀ տարածքից դուրս կատարված կադրերի վերապատրաստման ծախսեր(15 աշխատողի համար)	12 918
5.Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	33 000
6.Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, հաշմանդամներին հաշվարկված աշխատավարձ	180 000
7.Հոսքագծի ամորտիզացիա	19 570
	1 864 688
Ընդամենը՝	

Պատասխան՝ կազմակերպությունը հաշվետու տարվա արդյունքներով շահույթ չի ստացել, հետևաբար չունենք հարկվող շահույթ: